«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
2023թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի ֆինանսական հաշվետվությունները 2023թ. առաջին եռամսյակի համար
2. «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ զեկույց
3. «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի պատասխանատու անձանց հայտարարություն

«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ

Միջանկյալ Ֆինանսական հաշվետվություններ
2023թ առաջին եռամսյակի համար

Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն 5

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն 6

Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն 7

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն 8

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 9

Հիմնական միջոցներ 25

Կապակցված կողմեր 25

Հազար դրամ	31 մարտի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ	7,981,933	8,015,853
Ոչ նյութական ակտիվներ	1,089	1,268
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	5,000	5,000
Ասոցացված կազմակերպությունում ներդրումներ	-	197,390
Ոչ ընթացիկ կանխավճարներ	42,272	58,553
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**8,030,294**	**8,278,064**
Պաշարներ	1,053,986	1,156,902
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	988,633	1,400,781
Ընթացիկ կանխավճարներ	9,786,778	9,733,538
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,623,571	1,096,413
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**13,452,968**	**13,387,634**
Ընդամենը ակտիվներ	**21,483,262**	**21,665,698**
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	690,930	690,930
Չբաշխված շահույթ	12,276,336	11,817,279
Ընդամենը սեփական կապիտալ	**12,967,266**	**12,508,209**
Պարտավորություններ		
Հետաձգված հարկային պարտավորություն	192,967	192,967
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**192,967**	**192,967**
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	207,958	250,597
Կրեդիտորական պարտքեր շահաբաժինների գծով	7,808,270	8,354,908
Կրեդիտորական պարտքեր ընթացիկ հարկերի գծով	34,579	11,571
Կրեդիտորական պարտքեր այլ հարկերի գծով	82,228	227,562
Պահուստներ	189,994	119,884
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**8,323,029**	**8,964,522**
Ընդամենը պարտավորություններ	**8,515,996**	**9,157,489**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**21,483,262**	**21,665,698**

Հազար դրամ	**Ծնթգ.**	**01/01/2023-31/03/2023**	**01/01/2023-31/03/2023**	**01/01/2022-31/03/2022**	**01/01/2022-31/03/2022**
Հասույթ		2,489,739	2,489,739	2,208,631	2,208,631
Վաճառքի ինքնարժեք		(1,995,230)	(1,995,230)	(1,779,381)	(1,779,381)
Համախառն շահույթ		**494,509**	**494,509**	**429,250**	**429,250**
Վարչական ծախսեր		(230,358)	(230,358)	(245,681)	(245,681)
Գործառնական այլ ծախսեր		(11,192)	(11,192)	(34,744)	(34,744)
Գործառնական այլ եկամուտներ		1,367	1,367	610	610
Գործառնական գործունեության արդյունքներ		**254,326**	**254,326**	**149,435**	**149,435**
ֆինանսական եկամուտ		189,129	189,129	132,334	132,334
ֆինանսական ծախս		-	-	-	-
Արտարժույթի վերագնահատում ից զուտ եկամուտ		90,181	90,181	40,563	40,563
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**533,636**	**533,636**	**322,332**	**322,332**
Շահութահարկի գծով ծախս		(74,579)	(74,579)	(54,861)	(54,861)
Շահույթ ժամանակաշրջանի համար		**459,057**	**459,057**	**267,471**	**267,471**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-	-	-
Ընդամենը համապարփակ եկամուտ		**459,057**	**459,057**	**267,471**	**267,471**

Հաստատվել և ստորագրվել է ղեկավարության կողմից 2023թ. մայիսի 15-ին:

Գլխավոր հաշվապահ Վ. Թամրազով

Գլխավոր տնօրեն Կ.Հակոբյան

	01.01.2023թ.-31.03.2023թ.	***01.01.2022թ.-31.03.2022թ.***
Գործառնական գործունեություն		
Պատվիրատուներից ստացված գումարներ ներառյալ ԱԱՀ-ն	3,238,795	3,157,694
Վճարումներ մատակարարներին ներառյալ ԱԱՀ-ն	(1,771,213)	(1,293,602)
Վճարումներ աշխատակիցներին՝ ներառյալ հարկերը	(453,554)	(352,523)
Վճարումներ շահութահարկի գծով	(51,570)	(56,970)
Վերադարձ/(Վճարումներ) հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	(207,368)	538,172
Տրված նվիրատվություններ	(6,740)	(16,342)
Այլ վճարումներ	(1,315)	(13,816)
Ստացված տոկոսներ	192,896	134,283
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունում	**939,931**	**2,096,896**
Ներդրումային գործունեություն		
Ներդրում ժամկետային ավանդներում	(400,000)	-
Ժամկետային ավանդների մարում	400,000	481,260
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(154,062)	(231,860)
Մուտքեր ասոցացված կազմակերպությունում ներդրումների վաճառքից	197,390	-
Տրված փոխառություններ	-	(1,451,760)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված / (օգտագործված) ներդրումային գործունեությունից	**43,328**	**(1,202,360)**
Ֆինանսավորման գործունեություն		
Վճարված շահաբաժիններ	(448,122)	(3,408,872)
Վճարված տոկոսներ	-	-
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ֆինանսավորման գործունեությունում	**(448,122)**	**(3,408,872)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ / (նվազում)	**535,137**	**(2,514,336)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հունվարի 1-ի դրությամբ	1,096,524	3,836,456
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություններ	(7,979)	9,999
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ մարտի 31-ի դրությամբ	**1,623,682**	**1,332,119**

Հազար դրամ	**Բաժնետիրական կապիտալ**	**Չբաշխված շահույթ**	**Իրական արժեքի պահուստ վաճառքի համար մատչելի ներդրումների համար**	**Ընդամենը սեփական կապիտալ**
Մնացորդը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**690,930**	**11,817,279**	**-**	**12,508,209**
Շահույթ 2023թ. մարտի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար	-	459,057	-	459,057
Շահաբաժնի բաշխում	-	-	-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսա-կան արդյունք 2023թ մարտի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար	-	**459,057**	**-**	**459,057**
Մնացորդը 2023թ. մարտի 31-ի դրությամբ	**690,930**	**12,276,336**	**-**	**12,967,266**

Հազար դրամ	**Բաժնետիրական կապիտալ**	**Չբաշխված շահույթ**	**Իրական արժեքի պահուստ վաճառքի համար մատչելի ներդրումների համար**	**Ընդամենը սեփական կապիտալ**
Մնացորդը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**690,930**	**30,051,575**	**-**	**30,742,505**
Շահույթ 2022թ. մարտի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար	-	744,944	-	744,944
Շահաբաժնի բաշխում	-	-	-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսա-կան արդյունք 2022թ մարտի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար	-	**744,944**	**-**	**744,944**
Մնացորդը 2022թ. մարտի 31-ի դրությամբ	**690,930**	**30,796,519**	**-**	**31,487,449**

Ներածություն

(ա) Հայաստանի գործարար միջավայր

Հայաստանը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իր իրավական, հարկային և կարգավորումների հայեցակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը մեծապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից ձեռնարկվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային միջոցառումների արդյունավետությունից: Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ այն իրականացնում է համապատասխան քայլեր ներկայումս առկա հանգամանքներում Ընկերության գործունեության կայունությունը ապահովելու համար:

Ուկրաինայում պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ: Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների ինչպես Ուկրաինայում, այնպես էլ Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ուկրաինան և Ռուսաստանը Հայաստանի առանցքային առևտրային գործընկերներն են: Քանի որ պատերազմը դեռևս շարունակվում է, հնարավոր չէ հուսալիորեն գնահատել այն վերջնական ազդեցությունը, որը կարող է ունենալ ընկերության գործունեության վրա, քանի որ անորոշություն կա ընդհանուր տնտեսության վրա ազդեցության աստիճանի վերաբերյալ: Ընկերության ղեկավարությունը վերահսկում է տնտեսական իրավիճակը ընթացիկ պայմաններում:

(բ) Հիմնական գործունեությունը

“Մաքուր երկաթի գործարան” բաց բաժնետիրական ընկերությունը (“Ընկերություն”) 1968թ. հիմնադրված “Մաքուր երկաթի փորձա-արդյունաբերական գործարանի” իրավահաջորդն է: 1995թ. Ընկերությունը վերակազմավորվել է “Մաքուր երկաթի գործարան” բաց բաժնետիրական ընկերության:

Ընկերության հիմնական գործունեությունը մոլիբդենի խտանյութից ֆերոմոլիբդենի և եռակալած մետաղական մոլիբդենի արտադրությունն է: 2015թ. Ընկերությունը սկսել է մատուցել մոլիբդենի խտանյութի վերամշակման ծառայություններ: Մինչև 2015 թվականը և 2017 թվականի ընթացքում Ընկերությունը նաև արտադրել և վաճառել է իր սեփական ֆերոմոլիբդենը և եռակալած մետաղական մոլիբդենը:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Արցախի պող. 75:

Ընկերությունն իր գործարքների մեծամասնությունն իրականացնում է իր նախկին կապակցված կողմերի հետ: Արդյունքում, Ընկերությունը տնտեսապես կախված է այդ գործընկերներից:

1. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

2. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է (“դրամ”), որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ բացառությամբ այն դեպքերի երբ կատարվում են այլ նշումներ:

3. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:
Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում կատարվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

4. Իրական արժեքի չափում

Ընկերության հաշվապահական հաշվառման որոշակի քաղաքականությունների և բացահայտումների համար պահանջվում է իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները:

Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև.

- 1-ին մակարդակ. նույն ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասակարգվում է հիերարխիայի այն նույն մակարդակում, որում դասակարգվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

5. Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների:

6. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունները կիրառվել են հետևողականորեն այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Ասոցիացված կազմակերպություն

Ասոցիացված կազմակերպություններ են հանդիսանում այն կազմակերպությունները, որոնց ֆինանսական և գործառնական քաղաքականության նկատմամբ Ընկերությունն ունի նշանակալի ազդեցություն, սակայն՝ ոչ վերահսկողություն: Ընկերության կողմից նշանակալի ազդեցություն ենթադրվում է այն դեպքում, երբ Ընկերությանն են պատկանում այլ կազմակերպության քվեարկելու իրավունք տվող բաժնետոմսերի 20%-ից 50%-ը:

Ասոցիացված կազմակերպություններում ունեցած բաժնեմասերը հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով, և վերջիններիս սկզբնական ճանաչումն իրականացվում է սկզբնական արժեքով: Ներդրման սկզբնական արժեքը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառում են բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտների շահույթում կամ վնասում և այլ ֆինանսական արդյունքներում Ընկերության բաժնեմասն այն ճշգրտումներից հետո, որոնք իրականացվում են ներդրման օբյեկտների հաշվապահական հաշվառման քաղաքականությունն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ համապատասխանեցնելու համար՝ այն ամսաթվից, երբ Ընկերությունը սկսում է նշանակալի ազդեցություն ունենալ մինչև այն ամսաթիվը, երբ դադարում է նշանակալի ազդեցություն ունենալ: Ներդրման հաշվեկշռային արժեքի գծով կատարվում են

ճշգրտումներ՝ ձեռքբերման ամսաթվից ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում Ընկերության բաժնեմասի փոփոխությունները ճանաչելու համար:

Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտների հետ իրականացվող գործարքներից առաջացող չիրացված օգուտը բացառվում է ներդրման դիմաց ներդրման օբյեկտում Ընկերության բաժնեմասի չափով: Չիրացված վնասը բացառվում է նույն եղանակով ինչպես չիրացված օգուտը, սակայն այնքանով, որքանով բացակայում է արժեզրկման վկայություն:

Բաժնեմասնակցության մեթոդը կիրառելուց հետո, Ընկերությունը որոշում է, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել արժեզրկումից կորուստ ասոցիացված ընկերությունում կատարած ներդրման գծով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը որոշում է, թե արդյոք առկա է ասոցիացված ընկերությունում կատարած ներդրման արժեզրկման անկողմնակալ վկայություն: Նման վկայության դեպքում, Ընկերությունը հաշվարկում է արժեզրկման գումարը՝ որպես փոխհատուցվող գումարի և հաշվեկշռային արժեքի տարբերություն:

(բ) Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Հասույթը ճանաչվում է այնպես, որ նկարագրի ապրանքների և ծառայությունների՝ հաճախորդներին փոխանցման ձևը: Ճանաչված գումարը պետք է արտացոլի Ընկերության կողմից ակնկալվող այն գումարը, որ կստանա այդ ապրանքների և ծառայությունների փոխանցման դեպքում: Որպեսզի բավարարվի հասույթի ճանաչման հիմնական սկզբունքը, Ընկերությունը կիրառում է հինգ քայլերի մոդելը, մասնավորապես՝

- Որոշել հաճախորդի հետ կնքված պայմանագիրը:
- Որոշել պայմանագրով սահմանված կատարման ենթակա պարտականությունները: Կատարման ենթակա պարտականությունները պայմանագրով սահմանված խոստումներ են՝ հաճախորդին փոխանցելու հստակ սահմանված ապրանքներն ու ծառայությունները:
- Սահմանել գործարքի գինը: Գործարքի գինն իրենից ներկայացնում է այն գումարը, որը Ընկերությունն ակնկալում է ստանալ հաճախորդներին խոստացված ապրանքների և ծառայությունների փոխանցման դիմաց: Եթե պայմանագրով խոստացված գումարը պարունակում է փոփոխական գումար, ապա Ընկերությունը պետք է գնահատի այն գումարը, որը վերջինս ակնկալում է հաճախորդներին խոստացված ապրանքներն ու ծառայությունները փոխանցելու դիմաց:
- Գործարքի գինը բաշխել յուրաքանչյուր կատարման ենթակա պարտականության վրա՝ հիմք ընդունելով պայմանագրով խոստացված յուրաքանչյուր հստակ սահմանված ապրանքի կամ ծառայության մասով առանձին վերցված վաճառքի գինը:
- Հասույթը ճանաչվում է այն ժամանակ, երբ կատարման ենթակա պարտականությունը բավարարված է՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքներն ու ծառայությունները (այսինքն՝ երբ հաճախորդը ձեռք է բերում այդ ապրանքի կամ ծառայության վերահսկողությունը): Կատարման ենթակա պարտականությունը կարող է բավարարվել ժամանակի կոնկրետ պահին (որպես կանոն հաճախորդին ապրանքների փոխանցման խոստումների դեպքում) կամ ժամանակի ընթացքում (որպես կանոն հաճախորդին ծառայությունների փոխանցման խոստումների համար): Ժամանակի ընթացքում բավարարված կատարման ենթակա պարտականության համար, Ընկերությունը

ընտրում է առաջընթացի չափման համապատասխան միջոց սահմանելու համար, թե որքան հասույթ պետք է ճանաչվի, երբ կատարման ենթակա պարտականությունը բավարարված է:

Վաճառված ապրանքներ

Կախված առանձին վաճառքի պայմանագրերի պայմաններից՝ տարբեր է ռիսկերի և հատույցների փոխանցումների ժամկետը: Ֆերոմոլիբդենի, եռակալած մետաղական մոլիբդենի և պղնձի օքսիդի համար փոխանցումը սովորաբար տեղի է ունենում, երբ արտադրանքը մաքսազերծվում է մաքսատանը՝ արտահանման նպատակով:

Ընկերության ֆերոմոլիբդենի և եռակալած մետաղական մոլիբդենի, ինչպես նաև պղնձի օքսիդի վաճառքի պայմանագրերը սովորաբար նախատեսում են պայմանական վճարումներ, ինչպես նշված է առանձին պայմանագրերում՝ հիմք ընդունելով նմուշների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի սփոթ գները: Վերջնահաշվարկը կատարվում է ելնելով մետաղի շուկայական գներից՝ միջինացված գնանշման որոշակի ապագա ժամանակահատվածի համար: Որպես կանոն, ֆերոմոլիբդենի, եռակալած մետաղական մոլիբդենի և պղնձի օքսիդի համար գնանշման ապագա ժամանակաշրջանը կազմում է մինչև երկու ամիս՝ առաքման ամսից հետո:

Վաճառված ապրանքներ

Ընկերության պայմանականորեն գնանշվող վաճառքի պայմանագրերը պարունակում են ներդրված ածանցյալ գործիք, որը առանձնացված չէ հիմնական պայմանագրից՝ համաձայն ՖՀՄՍ 9-ի: Պայմանականորեն գնանշվող վաճառքի համար ճանաչված առևտրային դեբիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով՝ հիմք ընդունելով ֆորվարդային գինը:

Ծառայություններ

Մատուցված ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանին համամասնորեն, երբ կատարման ենթակա պարտականությունը բավարարված է: Գործարքի ավարտվածության աստիճանը գնահատվում է կատարված աշխատանքների ուսումնասիրության կամ ընդունման ակտերի հիման վրա:

(գ) Ֆինանսական եկամուտ

Ընկերության ֆինանսական եկամուտը ներառում է ներդրված միջոցների և տրամադրված փոխառությունների գծով տոկոսային եկամուտը:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(դ) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված

փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(ե) Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես աշխատակցի կողմից նախկինում մատուցված ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(զ) Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Այն ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված տարրերին:

i. Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

ii. Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվառման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային հաշվառման նպատակով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն

գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում, և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Ընկերությունը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

(է) Պաշարներ և վաճառքի ինքնարժեք

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է “առաջինը՝ մուտք, առաջինը՝ ելք” սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման ծախսումները, արտադրական կամ փոխարկման ծախսումները և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը բնականոն գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Ընկերության մոլիբդենի խտանյութի գնման պայմանագրերը սովորաբար նախատեսում են պայմանական վճարումներ, ինչպես նշված է առանձին պայմանագրերում՝ հիմք ընդունելով նմուշների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի սփոթ գները: Վերջնահաշվարկը կատարվում է ելնելով մետաղի միջին շուկայական գներից՝ միջինացված գնանշման որոշակի ապագա ժամանակահատվածի համար: Որպես կանոն, մոլիբդենի խտանյութի համար գնանշման

ապագա ժամանակաշրջանը կազմում է մինչև երկու ամիս՝ առաքման ամսից հետո: 2021 և 2022 թթ. ընթացքում Ընկերությունը չի ունեցել մոլիբդենի խտանյութի ձեռքբերում:

(ը) Այլ ծախսեր

Սոցիալական ծրագրերի գծով ծախսեր

Այն չափով որքանով սոցիալական ծրագրերին Ընկերության հատկացումները ծառայում են հանրության շահերին և չեն սահմանափակվում Ընկերության աշխատակիցներով, դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(թ) Հիմնական միջոցներ

i. Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը և կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով “Այլ եկամուտ/Այլ ծախս” հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

ii. Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ դրա հետևանքով Ընկերության ապագա տնտեսական օգուտների ներհոսքը կաճի, և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում

է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

iii. Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է այն ամսաթվից, երբ դրանք տեղադրվում են և պատրաստ են շահագործման համար, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման համար պատրաստ լինելու ամսաթվից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Մաշվածությունը, ընդհանուր առմամբ, ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվառվում:

Հիմնական միջոցների խոշոր միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

Շենքեր	12-ից 40 տարի
Մեքենա-սարքավորումներ	5-ից 20 տարի
Փոխադրամիջոցներ	2-ից 9 տարի
Տնտեսական գույք	1-ից 5 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(ժ) Ոչ նյութական ակտիվներ

i. Ճանաչում և չափում

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

ii. Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում միայն այն պարագայում, եթե դրանք ավելացնում են Ընկերության ապագա տնտեսական օգուտների ներհոսքը: Մնացած բոլոր ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում առաջանալուն պես:

iii. Ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի արժեքից կամ այլ փոխարինող գումարից՝ հանած մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Գնահատված օգտակար ծառայության ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակահատվածների համար հետևյալն են.

Ծրագիր	10 տարի
Արտոնագրեր և այլ ակտիվներ	3-ից 10 տարի

Ամորտիզացիայի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են :

(հ) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ հաշվի առնելով հարկային հետևանքները:

(լ) Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական գործիքը մի պայմանագիր է, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք:

i. Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչում և չափում

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվների դասակարգումը կախված է վերջիններիս դրամական հոսքերի բնույթից և դրանք կառավարելու Ընկերության բիզնես մոդելից: Բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսավորման բաղադրիչ, կամ որոնց համար Ընկերությունը օգտագործել է կիրառելի նպատակահարմար մոտեցում՝ Ընկերությունը սկզբնապես ֆինանսական ակտիվը չափում է իր

իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող չէ:

Որպեսզի ֆինանսական ակտիվը դասակարգվի և չափվի ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, անհրաժեշտ է, որ վերջինս առաջացնի դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են "բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումները" (SPPI): Այս գնահատումը կոչվում է SPPI թեստ և կատարվում է գործիքի մակարդակով:

Ընկերության ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը արտացոլում է Ընկերության ֆինանսական ակտիվների կառավարումը դրամական հոսքեր ձևավորելու նպատակով: Բիզնես մոդելը սահմանում է, թե արդյոք դրամական հոսքերը ձևավորվում են պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքից կամ միաժամանակ՝ երկուսից:

Ֆինանսական ակտիվների գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորություններով (կանոնավոր գործարքներում) սահմանված ժամկետի ընթացքում, ճանաչվում են գործարքի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Ընկերությունը ձեռք է բերել կամ վաճառել ակտիվը:

Հետագա չափում

Հետագա չափման նպատակներով ֆինանսական ակտիվները դասակարգվում են չորս դասերից մեկում

- Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ),
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, որոնց կուտակված օգուտները և կորուստները ապաճանաչման ժամանակ վերադասակարգվում են (պարտքային գործիքներ),
- Իրական արժեքով նախորոշված՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, որոնց կուտակված օգուտները կամ կորուստները ապաճանաչման ժամանակ չեն վերադասակարգվում (բաժնային գործիքներ),
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասով միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

<u>Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ)</u>

Ընկերությանն առավել բնորոշ է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների դասը: Ընկերությունը ֆինանսական ակտիվները չափում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարված են ստորև թվարկված երկու պայմանները.

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահելը՝ պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու նպատակով, և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հետագա չափումներն իրականացվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և ենթակա են արժեզրկման

գնահատման: Օգուտներն ու կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե ակտիվը ապաճանաչվում է, վերանայվում է կամ արժեզրկվում է:

Ընկերության ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներում ներառվում են բանկային հաշիվները և ավանդները, առևտրային դեբիտորական պարտքերը և վերջնական մայր կազմակերպությանը տրված փոխառությունները:

<u>Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ)</u>

Ընկերությունը պարտքային գործիքները չափում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, եթե միաժամանակ բավարարված են ստորև թվարկված պայմանները.

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է ակտիվը պահել միաժամանակ պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու և վաճառելու նպատակով, և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների տոկոսային եկամուտը, արտարժույթի փոխարժեքի վերագնահատումները և արժեզրկումից կորուստները կամ հակադարձումները ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում և հաշվարկվում են նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Իրական արժեքի մնացած փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Ապաճանաչման ժամանակ, իրական արժեքի կուտակված փոփոխությունը, որը ճանաչվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Ընկերությունը չունի իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ:

Սկզբնական ճանաչումից հետո Ընկերությունը երբեմն կարող է ընտրել իր բաժնային ներդրումներից մի մասն առանց հետագա վերանայման դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ, երբ դրանք համապատասխանում են կապիտալի գործիքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 32-ի "Ֆինանսական գործիքներ. Ներկայացում" ստանդարտի, և չեն պահվում առևտրային նպատակով: Նման դասակարգումը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր գործիքի համար:

Այս բաժնային գործիքներից օգուտները կամ վնասները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ, երբ վճարման իրավունքը հաստատվել է, բացառությամբ, երբ Ընկերությունը օգուտ է ստանում տվյալ մուտքերից՝ գործիքի արժեքի մի մասի վերականգնման միջոցով: Այդ դեպքում նման օգուտները հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքները ենթակա չեն արժեզրկման գնահատման: Այդ գործիքների օտարումից հետո, կուտակված Իրական արժեքի պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը հիմնականում ապաճանաչվում է (այսինքն՝ հանվում է Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից), երբ

- ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը, կամ
- Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ ստանձնել է ստացված դրամական միջոցների հոսքերը ամբողջությամբ երրորդ կողմին վճարելու պարտականություն առանց էական ուշացման փոխանցման համաձայնագրի համաձայն, և ա) Ընկերությունը փոխանցել է, ըստ էության, ակտիվի բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ բ) Ընկերությունը ոչ փոխանցել է, ոչ պահպանել է ակտիվի, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, բայց փոխանցել է ակտիվի վերահսկողությունը:

Երբ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ ձեռք է բերել փոխանցման համաձայնագիր, վերջինս պետք է գնահատի, թե ինչ չափով է պահպանել ակտիվի սեփականության հետ կապված ռիսկերն ու հատույցները:Երբ Ընկերությունը ոչ փոխանցել է, ոչ պահպանել է ակտիվի, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ոչ էլ փոխանցել է ակտիվի վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել փոխանցված ակտիվը իր շարունակվող ներգրավվածության չափով: Այս դեպքում, Ընկերությունը նաև ճանաչում է դրա հետ կապված պարտավորությունը: Փոխանցված ակտիվը և դրա հետ կապված պարտավորությունը չափվում են այն հիմքով, որը արտացոլում է Ընկերության պահպանած իրավունքներն ու պարտականությունները:

Շարունակվող ներգրավվածությունը, որը ձեռք է բերում փոխանցված ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, չափվում է ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքի և այն առավելագույն արժեքից նվազագույնով, որը Ընկերությունից կարող է պահանջվել մարել:

ii. Ֆինանսական պարտավորություններ

Սկզբնական ճանաչում և չափում

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ, վարկեր և փոխառություններ, կրեդիտորական պարտքեր, կամ անհրաժեշտության դեպքում ածանցյալ գործիքներ՝ նախատեսված որպես արդյունավետ հեջավորման գործիքներ: Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի ու փոխառությունների և կրեդիտորական պարտքերի դեպքում՝ հանած ուղղակիորեն վերագրելի գործարքային ծախսերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, բանկային օվերադրաֆտները:

Հետագա չափում

Հետագա չափման նպատակով ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են երկու տեսակի.

- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասով միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ (վարկեր և փոխառություններ):

Ընկերությունը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասով միջոցով չափվող որևէ ֆինանսական պարտավորություն:

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ դրա հետ կապված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցրած է ճանաչվում: Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է միևնույն փոխատուի՝ էականորեն տարբեր պայմաններով մեկ այլ պարտավորությամբ, կամ գոյություն ունեցող պարտավորության պայմանները էականորեն ձևափոխվում են, ապա այդպիսի փոխարինումը կամ ձևափոխումը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, և համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում:

iii. Ֆինանսական գործիքների հաշվանցումը

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե Ընկերությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու, միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(խ) Արժեզրկում

i. Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ճանաչում է ակնկալվող վարկային կորուստների պահուստ բոլոր պարտքային գործիքների համար, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Ակնկալվող վարկային կորուստների պահուստը հիմնված է պայմանագրի համաձայն պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և Ընկերության կողմից ստացվելիք ակնկալվող դրամական հոսքերի տարբերության վրա՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող դրամական միջոցների հոսքերը ներառում են գրավադրված միջոցների վաճառքից ստացվող դրամական միջոցների հոսքերը կամ այլ պայմանագրային պայմանների մաս կազմող պարտքային դիրքի ամրացումները:

Ակնկալվող վարկային կորուստների պահուստները ճանաչվում են երկու փուլով: Պարտքային ռիսկերի ենթարկվածության բոլոր տեսակների համար, որոնց պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր էականորեն չի ավելացել, ակնկալվող վարկային կորուստների պահուստները ձևավորվում են այն վարկային կորուստների համար, որոնք առաջանում են հաջորդող 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանական դեպքերի արդյունքում (12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստներ): Պարտքային ռիսկերի ենթարկվածության բոլոր տեսակների համար, որոնց պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր էականորեն ավելացել է, ակնկալվող վարկային կորուստների պահուստը պետք է ձևավորել ակտիվի ողջ ժամկետայնության

ընթացքում ակնկալվող վարկային կորուստների համար, անկախ դեֆոլտի տեղի ունենալու ժամկետից (ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստներ):

Առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների դեպքում, Ընկերությունը կիրառում է ակնկալվող վարկային կորուստների հաշվարկման պարզեցված մոտեցում: Հետևաբար, Ընկերությունը չի հետևում պարտքային ռիսկի փոփոխություններին, այլ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին կորուստի պահուստը ճանաչում է՝ հիմք ընդունելով ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստները: Ընկերությունը բանկային հաշիվների և ավանդների, ինչպես նաև առևտրային դեբիտորական պարտքերի համար պահուստը հաշվարկում է՝ հիմք ընդունելով երկարաժամկետ գործընկերոջ ռիսկի վարկանիշը, իսկ տրված փոխառությունների պահուստը՝ հիմք ընդունելով Մուդիզի կողմից տրված ոլորտի դեֆոլտի հավանականությունը:

Ընկերությունը ֆինանսական ակտիվը համարում է դեֆոլտ եղած, եթե դրա գծով պայմանագրային վճարումները 90 օր և ավել ժամկետանց են: Այնուամենայնիվ, որոշակի դեպքերում, Ընկերությունը կարող է ֆինանսական ակտիվը համարել դեֆոլտ եղած, եթե ներքին կամ արտաքին տեղեկատվությունը ցույց է տալիս, որ հավանական չէ, որ Ընկերությունը մինչև Ընկերության կողմից պահվող որևէ պարտքային դիրքի ամրապնդումը հաշվի առնելը ամբողջությամբ կստանա պայմանագրային գումարը: Ֆինանսական ակտիվը դուրս է գրվում, եթե առկա չէ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի վերականգնման ողջամիտ ակնկալիք:

ii. Ոչ ֆինանսական ակտիվներ

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր: Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս գնահատված փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները տեղաբաշխվում են դրամաստեղծ միավորի կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները համամասնության հիմունքով նվազեցնելու համար:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկումից վնասների նվազեցման կամ վերացման հայտանիշներ բացահայտելու նպատակով: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է,

եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(ծ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս: Ընկերությունը պահուստ է ճանաչում չօգտագործված արձակուրդային վճարների և աշխատակիցներին լրացուցիչ պարգևավճարների գծով:

(կ) Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Ընկերությունը ներկայացնում է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացված շահույթի մասին տեղեկատվություն իր սովորական բաժնետոմսերի համար: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվում է Ընկերության սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը բաժանելով այդ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի միջին կշռված թվին՝ սեփական բաժնետոմսերի քանակի ճշգրտմամբ: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթը հաշվարկելու նպատակով Ընկերությունը ճշգրտում է իր սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը և շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի միջին կշռված թիվը՝ սեփական բաժնետոմսերի քանակի ճշգրտմամբ՝ բոլոր նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսերի ազդեցությունը հաշվի առնելով:

(հ) Սեգմենտային հաշվետվություններ

Գործառնական սեգմենտը Ընկերության այն բաղադրիչն է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեության մեջ, որից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր, ներառյալ Ընկերության այլ բաղադրիչների հետ գործառնություններին վերաբերող հասույթները և ծախսերը: Բոլոր գործառնական սեգմենտների գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են Խորհրդի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեությունը գնահատելու նպատակով: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը բաղկացած է մեկ գործառնական սեգմենտից:

(ձ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են բանկերում և դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցներից, ինչպես նաև կարճաժամկետ բարձր իրացվելի ավանդներից ՝ ոչ ավելի, քան երեք ամիս մարման ժամկետով, որոնք հեշտությամբ փոխարկվում են ստույգ արժեքով կանխիկի և ենթակա են մինիմալ ռիսկի:

Դրամական միջոցների հոսքերի հաշվետվության նպատակով դրամական միջոցները և դրամական միջոցների համարժեքները բաղկացած են կանխիկից և կարճաժամկետ ավանդներից, ինչպես սահմանված է վերևում՝ չմարված բանկային օվերդրաֆտներից, քանի որ դրանք համարվում են Ընկերության դրամական միջոցների կառավարման անբաժանելի մասը:

7 Հիմնական միջոցներ

2023թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում ընկերությունը ձեռք է բերել 185,865 հազար դրամի (2022թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում՝ 146,321 հազար դրամի) հիմնական միջոցներ և օտարել է 1,370 դրամի (2022թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում՝ 0 դրամի) հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցներ:

8 Կապակցված կողմեր

(ա) Վերահսկողություն

Ընկերության անմիջական մայր կազմակերպությունն է հանդիսանում "Քրոնիմետ Ֆերրոլեգ" ՍՊԸ-ն (Գերմանիա): Ընկերության վերջնական մայր կազմակերպությունն է "Քրոնիմետ Հոլդինգ" ՍՊԸ-ն, որը վերահսկվում է Գյունտեր Պիլարսկու և Յուրգեն Պիլարսկու կողմից:

(բ) Գործարքներ առնացքային ղեկավար անձնակազմի հետ

Մարտի 31-ին ավարտված հաշվետու ժամանակաշրջանների համար առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը ներկայացված է ստորև՝.

հազ. դրամ	**01.01.23թ. - 31.03.23թ.**	**01.01.22թ. - 31.03.22թ.**
Աշխատավարձ և պարգևատրումներ	**56,077**	**50,196**

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

	Գործարքի գումարը		Մնացորդը առ	
հազ. դրամ	**01/01/2023-31/03/2023**	**01/01/2022-31/03/2022**	**31/03/2023**	**31/03/2022**
Արտադրանքի և ծառայությունների վաճառք				
Պիլարսկի ընտանիքի ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	768,920	-	-	-
Նյութերի և ծառայությունների ձեռքբերում				
Վերջնական մայր կազմակերպություն	16,163	18,286	16,096	18,286
Պիլարսկի ընտանիքի ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ (նյութեր)	-	-	-	-

	Տոկոսային եկամուտ		Մնացորդը առ	
հազ. դրամ	**01/01/2023թ. – 31/03/2023թ.**	**01/01/2022թ. – 31/03/2022թ.**	**31/03/2023թ.**	**31/03/2022թ.**
Տրված փոխառություններ				
Վերջնական մայր կազմակերպություն	-	4,420	-	1,462,133

Փոխառությանը կրել է տարեկան երեք ամսյա Libor գումարած 3% տոկոսադրույք:

«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ

Ներածություն

«Մաքուր երկաթի գործարան» բաց բաժնետիրական ընկերությունը (Ընկերություն) 1968թ. հիմնադրված Մաքուր երկաթի փորձա-արդյունաբերական գործարանի իրավահաջորդն է: Գործարանը 1995թ. սեփականաշնորհման արդյունքում վերակազմավորվել է «Մաքուր երկաթի գործարան» բաց բաժնետիրական ընկերության:

Ընկերության հիմնական գործունեությունը ֆերոմոլիբդենի և եռակալված մետաղական մոլիբդենի արտադրությունն է: 2015թ. Ընկերությունը սկսել է մատուցել մոլիբդենի խտանույթի վերամշակման ծառայություններ: 2016թ. Ընկերությունը ժամանակավորապես դադարեցրեց եռակալված մետաղական մոլիբդենի արտադրությունը՝ տեխնոլոգիական վերազինում իրականացնելու նպատակով: 2020թ. -ից Ընկերությունը սկսել է արտադրել և վաճառել պղնձի տեխնիկական օքսիդ:

Ընկերության հասարակ անվանական բաժնետոմսերը ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի կողմից: Ընկերությունը՝ որպես հաշվետու թողարկող հետևում է ՀՀ Կառավարության 30.12.2010թ. թիվ 1769-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքի դրույթներին:

1. **Ընկերության գործունեության հիմնական ցուցանիշները 2023թ. -ին**

Ընկերության 2023թ.-ի առաջին եռամսյակի հասույթը կազմել է 2,489,740 հազ. ՀՀ դրամ, որից 1,665,892 հազ. ՀՀ դրամը ձևավորվել է Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ ՓԲԸ-ին մոլիբդենի կոնցենտրատի վերամշակման ծառայությունների մատուցումից: Այսպես, 2023թ.-ի առաջին եռամսյակում Ընկերությունը վերամշակել է 1826 տոննա մոլիբդենի կոնցենտրատ՝ 811 տոննա մոլիբդեն մետաղի պարունակությամբ (2022թ. նույն ժամանակահատվածում 2,120 տոննա կոնցենտրատ՝ 943 տոննա մոլիբդեն մետաղի պարունակությամբ):

Ընկերության կայուն զարգացումն ապահովելու, էկոլոգիապես ավելի բարենպաստ արտադրություն կազմակերպելու և աշխատանքի պայմանների բարելավման նպատակով Ընկերությունը 2023թ.-ի առաջին եռամսյակում ձեռք է բերել 185,865 հազ. ՀՀ դրամի հիմնական միջոցներ (2022թ.-ի առաջին եռամսյակում՝ 146,321 հազ. ՀՀ դրամի հիմնական միջոցներ):

2023թ.-ի առաջին եռամսյակում Ընկերության շահութահարկի գծով ընթացիկ հարկի ծախսը կազմել է 74,579 հազ. ՀՀ դրամ (2022թ.-ի առաջին եռամսյակում՝ 54,861 հազ. ՀՀ դրամ), որի գծով կատարվել է 51,570 հազ. ՀՀ դրամ կանխավճար (2022թ.-ի առաջին եռամսյակում՝ 56,970 հազ. ՀՀ դրամ կանխավճար):

Ընկերության աշխատակիցների միջին թիվը և միջին աշխատավարձի մեծությունը ներկայացված է ստորև՝

Աղյուսակ 1. Աշխատակիցների միջին թվաքանակ և միջին ամսական աշխատավարձ

Ցուցանիշ	**2023 առաջին եռամսյակ**	**2022 առաջին եռամսյակ**
Աշխատակիցների միջին ցուցակային թիվ (մարդ)	386	401
Աշխատավարձի ֆոնդ (հազ. ՀՀ դրամ)	474,155	500,399
Միջին ամսական աշխատավարձ (հազ. ՀՀ դրամ)	409	416

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը բնութագրող ամփոփ գործակիցներ՝

Աղյուսակ 2. Ամփոփ ֆինանսական գործակիցներ

Ցուցանիշի անվանումը	**31.03.2023թ.**	**31.03.2022թ.**
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) հազ ՀՀ դրամ	6.64	3.87
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)%	3.54%	1.17%
Ակտիվների շահութաբերություն (ROA) %	2.14%	1.11%
Զուտ շահույթի մարժա (NPM) %	18.44%	12.11%
Կապիտալի համարժեքության գործակից %	60.36%	95.61%
Բացարձակ իրացվելության գործակից	0.20	1.48
Արագ իրացվելության գործակից	1.49	6.01
Ընթացիկ իրացվելության գործակից	1.62	6.76
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	2.08	1.81
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	175.15	201.97
Պաշարների շրջանառելիության գործակից	1.80	2.24
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	202.23	162.67
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	8.70	6.77
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	41.94	53.91

2. Ընկերության գործունեության հիմնական ռիսկերը

Ընկերության գործունեության վրա ազդող նշանակալի ռիսկերից է միջազգային շուկայում մետաղների գների փոփոխությունը ինչն ուղղակիորեն ազդում է Ընկերության արտադրանքի գնի վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը որ 2015թ.-ի հունիս ամսից Ընկերությունը սկսել է աշխատել վերամշակման ծառայությունների մատուցման (կապալի) հիմունքով գների փոփոխության ռիսկը հիմնականում կրում է պատվիրատուն: Այնուամենայնիվ Ընկերությունը շարունակում է նաև գնել և

վերամշակել մոլիբդենի կոնցենտրատ սեփական արտադրության և վաճառքի նպատակով և գնային ռիսկը կառավարում է գնման և վաճառքի պայմանագրերի ճիշտ համադրման ճանապարհով: Հաջորդ կարևոր ռիսկն արժութային ռիսկն է՝ այնքանով որքանով Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթները որոնցով արտահայտված են Ընկերության վաճառքները գնումները և ֆինանսական ներդրումները տարբեր են: Այդ գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով և ռուսական ռուբլով: Քանի որ Ընկերությունն ակնկալում է որ կապիտալ ներդրումների հետ կապված ծախսումները հիմնականում կկատարվեն արտարժույթով (հիմնական մեքենասարքավորումները պետք է ներմուծվեն արտերկրից) ֆինանսական ներդրումները ևս պահվում են արտարժույթով:

3. Ընկերության կանոնադրական կապիտալը բաժնետերերը և դրանց կազմի փոփոխությունը շահութաբաժինների վճարում

31.03.2023թ. դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 690 930 հազ. ՀՀ դրամ՝ բաժանված 10 000 ՀՀ դրամ անվանական արժեքով 69 093 հասարակ անվանական բաժնետոմսի:

31.03.2023թ. դրությամբ Ընկերության անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում գրանցված է եղել 16 անձ, որոնցից երկուսը հանդիսացել են իրավաբանական (օտարերկրյա), իսկ մնացածը՝ ֆիզիկական անձինք:

31.03.2023թ. դրությամբ Ընկերության նշանակալից բաժնետերերն են եղել՝

1) Քրոնիմետ երկաթաձուլվածքների Առևտրային ՍՊԸ (ԳԴՀ Կարլսրուհե Զյուդբեկենշտռասե 22), որը տիրապետել է Ընկերության 35 223 հասարակ անվանական բաժնետոմսերի, ինչը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 50.979%-ը:

2) ՔՐՈՆԻՄԵՏ Հոլդինգ ՍՊԸ (ԳԴՀ Կարլսրուհե Զյուդբեկենշտռասե 22), որը տիրապետել է Ընկերության 33 639 հասարակ անվանական բաժնետոմսերի, ինչը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 48.686%-ը:

4. Ընկերության ներդրումները

հազ. դրամ	**31 մարտի 2022թ.**
«Մետաղագործ» ՓԲԸ	5,000

31.03.2021թ. դրությամբ Ընկերության բաժնեմասնակցությունը «Մետաղագործ» ՓԲԸ-ում՝ 15.94% :

5. Ընկերության բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված պայմանագրեր

2023թ.-ի հունվարի 3-ին Ընկերությունը երրորդ կողմին վաճառել է իր ներդրումը Հին Արենի ՓԲԸ-ում 197,390 հազար դրամ գումարի դիմաց:

6. Ընկերության հետ փոխկապակցված անձինք

Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն

փոխկապակցված են համարվում Ընկերության խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները, գործադիր մարմնի իրավասություններ իրականացնող իրավաբանական անձը կամ դրա տնօրենը կամ դրա խորհրդի անդամները կամ դրա կանոնադրությամբ կամ պայմանագրով նախատեսված՝ ղեկավարման գործառույթներ իրականացնող այլ անձինք, վերստուգող հանձնաժողովի անդամները, Ընկերության անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձինք և Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենքով փոխկապակցված ճանաչվող այլ անձինք:
2023թ. առաջին եռամսյակի ընթացքում Ընկերությունը փոխկապակցված անձանց հետ չի կնքել այնպիսի գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 10 տոկոսը:

7. Ընկերության կառավարման և վերահսկման մարմինների կառուցվածքի փոփոխությունը

2023 թվականին Ընկերության տնօրենների խորհրդի կազմը չի փոփոխվել:
Ընկերության տնօրենների խորհրդի կազմն է՝
Թոմաս Հայլ
Միեր Պոլոսկով
Բերնառդ Մարիա Կունսման
Պետար Կոստովիչ
Տիգրան Մամիկոնյան
Արամ Մամյան

Ընկերության վերստուգող հանձնաժողովի կազմն է՝
Սիեգֆրիեդ Գրուպպ
Գաբրիելե Էրբս
Նանե Խաչատրյան

Ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է Կարեն Հակոբյանը:

8. Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը

2023թ. առաջին եռամսյակային հաշվետվությունը հաստատելու պահին Ընկերությունն իր հիմնական գործունեության մասով ձեռնպահ է մնում կատարել կանխատեսումներ:

Գլխավոր տնօրեն Կարեն Հակոբյան

«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների ֆինանսական վիճակի եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն ազգանուն	**Պաշտոն**	**Պատասխանատվության շրջանակ**
Թոմաս Հայլ	Տնօրենների խորհրդի նախագահ	Տնօրենների խորհրդի աշխատանքների կազմակերպում և ղեկավարում
Միեր Պոլոսկով	Տնօրենների խորհրդի անդամ	Պատասխանատու նշանակալից բաժնետերերի հետ հարաբերություններում
Բերնառդ Մարիա Կունսման	Տնօրենների խորհրդի անդամ	Պատասխանատու ֆինանսական հարցերով
Պետար Կոստովիչ	Տնօրենների խորհրդի անդամ	Պատասխանատու կայուն զարգացման հարցերով
Տիգրան Մամիկոնյան	Տնօրենների խորհրդի անդամ	Պատասխանատու տեխնիկական հարցերով
Արամ Մամյան	Տնօրենների խորհրդի անդամ, արտադրության տնօրեն	Պատասխանատու արտադրության գծով
Կարեն Հակոբյան	Գլխավոր տնօրեն	Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարում
Վալերի Թամրազով	Գլխավոր հաշվապահ	Հաշվապահական հաշվառման վարում, ֆինանսական հաշվետվությունների ժամանակին կազմում և ներկայացում